ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XI-XX ԴԴ.) (Դ ՄԱՍ) * [1]

ՀՏԴ 94 (479.25); 343.412 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-9*

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի
հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի վարիչ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sasun-07@mail.ru
ORCID: 0009-0003-6885-2787

Հոդվածի նպատակն է տարաբնույթ սկզբնաղբյուրների (արխիվային փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, պարբերական մամուլ, թեմային առնչվող գրականություն) հենքի վրա ներկայացնել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, XI-XX դարերի ընթացքում տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացված էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության պատճառներն ու իրագործման փուլերը: Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության մեթոդների կիրառմամբ: Աղբյուրների հավաստիության ու վավերականության աստիճանը ճշտել ենք դրանց համակողմանի ուսումնասիրության միջոցով: Փաստերի համադրմամբ տրվում է հիմնահարցի պատմության հետևյալ փուլայնացումը. Արևելյան Այսրկովկասում տեղաբնիկ հայերի էթնիկ զտումներն ու կոտորածները տակավին իրականացվել են XI-XVIII դարերում, երբ երկրամասը պարբերաբար հայտնվում էր այլևայլ նվաճող, վաչկատուն ցեղերի ու պետությունների արշավանքների և տիրապետության տակ (թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, Լանկ-Թեմուր, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղեր և ղզլբաշների արշավանքներ, դրանց հաջորդած թուրք-պարսկական պատերազմներ, սուննի լեզգիներ, Նադիր շահի ու Աղա Մուհամմադ խանի արշավանքներ): Դրա հետևանքով հայ բնակչության մի որոշ մասը բռնագաղթի ենթարկվեց և լքեց հայրենի տարածքները կամ հարկադրաբար ընդունեց նվաճողների մահմեդական դավանանքը: Էթնիկ զտումների ու կոտորածների հաջորդ փուլը հայ-թաթարական ընդհարումների շրջանն էր (1905-1906 թթ.): Հետագայում

* Հոդվածը ներկայացվել է 04.03.2023թ., գրախոսվել՝ 23.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

[1] Հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի 21T-6A163 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

ցեղասպանական քաղաքականությունը պետական մակարդակով է իրականացվել՝ արդեն արհեստածին «Ադրբեջան» կազմավորման մուսավաթական (1918-1920 թթ.) և վերջում՝ Ադրբեջանի խորհրդային վարչակարգերի ժամանակաշրջաններում (1920-1990 թթ.): Հոդվածում հիմնավորված է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը էթնիկ զտումների ու ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը: Հետևաբար այդ քաղաքականությունը պետք է որակել որպես հայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Արևմտյան Հայաստանից ու Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Պատմագիտական գրականության մեջ թեև խնդրո առարկա հարցի վերաբերյալ անդրադարձները բազմաթիվ են, սակայն առանձին քննության առարկա չի դարձել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, հայերի էթնիկ զտումների ու ցեղասպանության քաղաքականության ամբողջական ուսումնասիրությունը:

Հիմնաբառեր՝ *Արևելյան Այսրկովկաս, Բաքվի նահանգ, Կուրի ձախափնյակ, համաթուրքականություն, էթնիկ զտումներ, այլատյացություն, ցեղասպանություն, բռնագաղթ:*

<u>ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ (1920-1990 ԹԹ.):</u> Կուրի ձախափնյակում հայ բնակչության էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության վերջին՝ չորրորդ փուլն ընդգրկում է Ադրբեջանի խորհրդային վարչակարգի շրջանը:

1920 թ. ապրիլին Խորհրդային Ռուսաստանի զորքերը մտան Այսրկովկաս: Լենին-Աթաթուրք ռազմաքաղաքական գործարքի պայմաններում (Թուրք-բոլշևիկյան 1920-1922 թթ. քաղաքական կապերի մասին մանրամասն տե՛ս Խուրշուդյան 32-35; Ղազանջյան) Քեմալի գործուն աջակցությամբ 1920 թ. ապրիլի 28-ին մուսավաթական Ադրբեջանը դարձավ խորհրդային, որը ինչպես որ նախատեսված էր, պետք է դառնար միջնորդ թուրք-բոլշևիկյան հարաբերություններում (Սահակյան 200, Սաֆրաստյան 140): Այսպիսով՝ առանց միջազգայնորեն՝ դե-յուրե ճանաչման և լեգիտիմ սահմաններ ունենալու ավարտվեց ԱԴՀ-ի մուսավաթական կառավարման՝ հայերի կոտորածներով, էթնիկ զտումներով, հոգևոր ու կրթամշակութային հաստատությունների ոչնչացմամբ ուղեկցված երկտարվա արյունոտ ժամանակաշրջանը:

Թվում էր, թե խորհրդային կարգերի հաստատումով փոքր-ինչ կմեղմանար տեղաբնիկ ժողովուրդների (ուդիներ, լեզգիներ, կրիզներ, ավարներ, ց(ծ)ախուրներ, թաթեր, թալիշներ և այլն), մասնավորապես՝ հայերի նկատմամբ հալածական քաղաքականությունն Ադրբ. ԽՍՀ-ում, սակայն, ինչպես և սպասելի էր, իրականում փոխվեց միայն հանրապետության անվանումը՝ մուսավաթականը դարձավ խորհրդային (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 200, g. 1, գ. 597, թ. 55*):

Եվ այսպես, խորհրդայնացումը բնավ չկասեցրեց «Ադրբեջան» արհեստածին կազմավորումում՝ բոլշևիկյան շպարով պատված, կարակուլե և ֆես փափախը հնգաթև կարմիր աստղակիր կոմունարկայով փոխարինած և «բոլշևիկական փետուրներով ծածկուած մուսսավաթիստ» ղեկավար գործիչների ոճրագործ քաղաքականությունը (Բոլշեւիկները Բագուում): Ավելին, նրանցից շատերը նախկին մուսավաթական գործիչներ էին (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 200, g. 1, գ. 417, թ. 208*), որոնք Մ. Քեմալի կոչով «շտապեցին մէկը միւսի յետևից աւելի «սօցիալիստ» դառնալ, քան ինքը սօցիալիզմն է» («Մուսաւաթ»-ը փոշմանել է): «Մշակ»-ը, այդ օրերին շարունակելով

լայնորեն լուսաբանել Ադրբեջանում տիրող ներքաղաքական իրավիճակը, 1920 թ. մայիսի 9-ի «Բագուի դիմակահանդէսը» խմբագրականի ներքո ուշագրավ դիտարկումներով նկարագրում և վերլուծում է Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման գործընթացը, միանգամայն իրավացիորեն այն որակում իբրև «դիմակահանդես»: Ըստ խմբագրականի՝ «կասպիական Թուրքիայի մայրաքաղաք Բագւում կատարւում էր մի յեղաշրջում, որ Coup d Etat լինելուց առաջ Coup de theatre դարձաւ: Մի գիշերուայ մէջ մուսավաթական կառավարութիւնը չքացաւ, իսկ նրա տեղ իրողութիւն դարձաւ …թաթար բոլշևիկական կառավարութիւն, որ իրան սկսեց անուանել, հետևելով Մոսկուայի օրինակին, «բանուորա-գիւղացիական կառավարութիւն»: …Թաթարը կոմմունի՞ստ. Նա, որ դեռ նախնական նոմադ կեանքի համար է պայքարում: Ինչո՞ւ չէ, թո՛ղ այդպէս լինի, հակառակ նոյնիսկ մարդկային բոլոր օրէնքների: Եթէ զսպուի մոնղոլական գազանը, եթէ արեան ծարաւը տեղի տայ մարդկայնութեան գէթ ամենատարրական պահանջներին, եթէ բժիշկ Սուլթանովի նման հրէշները՝ չենք ասում պատժուին, այլ գէթ անվնաս դարձուին և հեռացուին ասպարէզից, – այդքանն էլ բաւական կը լինէր հաւատալու համար, թէ հրաշքներ էլ են կատարւում այս աշխարհում: Սակայն պատրանքը ցրուեց մի քանի ժամում: Բանից դուրս եկաւ, որ կատարուած յեղաշրջումը բացէ ի բաց մի քաղաքական դիմակահանդէս էր: Նուրի, Խալիլ և այլ փաշաները ձգել էին իրանց ձեռքին բռնած թելը, և ադրբէջանեան խրտուիլակները կոմմունիստի գլխարկ էին ծածկել» (Բագուի դիմակահանդէսը):

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ մի իրողության ևս, որ ինքնին արժանի է հատուկ ուշադրության: Բանն այն է, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այս երկրում արտաքին քաղաքական շահերի տեսակետից մի հայտնի չափով բոլշևիկյան ղեկավարությունը շարունակեց ապավինել խորհրդային կարգերի հաստատման շրջանում ձևավորված քեմալաբոլշևիկյան քաղաքականությանը: Մյուս կողմից, Օսմանյան կառավարողները ևս քայլեր են ձեռնարկում Ադրբեջանի հետ համագործակցության հետագա ծավալման ուղղությամբ՝ այն ներառելու իրենց ազդեցության ոլորտում: Եվ այս իմաստով Ադրբեջանը ղեկավարող բոլշևիկները ակնապիշ հետևում էին Օսմանյան պետությունում հետզհետե աճող քեմալական շարժմանը: Փաստերը վկայում են, որ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո տևական ժամանակ հանրային ընկալման մեջ շարունակում էին պահպանվել մուսավաթականությունն ու քեմալականությունը: Մ. Քեմալի համաթյուրքական գաղափարաբանությունը, որպես քաղաքական մտածողության համակարգ, դեռևս ուղղություն էր տալիս ադրբեջանական կառավարող շրջանների գործողություններին: «Մոսկովցի» ծածկանունով հեղինակը 1927 թ. ամռանը, լինելով Բաքվում, ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ին տված թղթակցությունում գրում է. «Անգորան՝ հիացումի ու ներշնչման աղբիւր է ադրբէջանցի մտաւորականների և երիտասարդութեան համար: Մուստաֆա Քեմալն ամենաժողովրդական դէմքն է այստեղ» (Մոսկովցի): Կ. Պոլսում 1922-1924 թթ. դիվանագիտական աշխատանք կատարած գրականագետ, պետական-քաղաքական գործիչ Պողոս Մակինցյանը Երևանում 1924 թ. մարտի 17-ին ուսանողության համար կարդացած դասախոսության մեջ փաստել է. «Մեր հարևան Ազրբայջանը իր ողջ գիտական և գրական պաշարը այսօր ստանում է Թուրքիայից» (Մակինցյան 202): Նկատենք, որ դրանում հատկապես մեծ ներգործություն էին ունենում Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո Օսմանյան պետությունում ծվարած մուսավաթական ջարդարար գործիչները (Ալի Հուսեյին Զադե, Ահմեդ-բեկ Աղաև, Մ. Է. Ռասուլզադե, Խոսրով-բեկ Սուլթանով, Բեհբութ-խան Ջիվանշիր, Շաֆի-բեկ Ռուստամբեկով, Մուստաֆա-բեկ Վեքիլով, Խալիլ-բեկ Խասմամեդով և ուրիշներ), որոնք, համախմբվելով Քեմալի շուրջ, և օգտագործելով հին կապերը, սերտորեն համագործակցում էին քեմալական ղեկավար գործիչների հետ և ծածուկ կամ բացահայտ ուղղորդում Ադրբ. ԽՍՀ-ի ընդհատակյա մուսավաթականների գործունեությունը (Политбюро и дело Берия 989):

Միևնույն ժամանակ, Բաքուն ստանձնել էր Այսրկովկասում, Կենտրոնական Ասիայում և Պարսկաստանում կազմակերպվելիք քեմալական շարժման հենարանի դերը: Այդ է վկայում Մյունխենում 1920 թ. ամռանը հրավիրված մահմեդական համագումարի որոշումը, որի համաձայն՝ Բաքվի վրայով Պարսկաստան պետք է անցներ քեմալականների հետ սերտորեն համագործակցող երիտթուրք Ջեմալ փաշան քեմալական շարժումը կազմակերպելու նպատակով (Մահմեդական համագումարը Միւնխենում): Ահա թե ինչու 1920 թ. մայիսի 16-ին Ադրբեջանի Ռազմհեղկոմի նախագահի պաշտոնով Մոսկվայից Բաքու ժամանած Ն. Նարիմանովը, քաղաքի մզկիթում կայացած հրապարակային ժողովում ներկայացնելով իր ծրագրերը (Ադրբէջան), նույն թվականի օգոստոսի 23-ին Մ. Քեմալին ուղարկած նամակում քաղաքական երեսպաշտությամբ չէր թաքցնում իր համակրանքը վերջինիս հանդեպ և հայտնում էր, որ «մահմեդական կոմունիստներն ամեն ջանք կներդնեն թուրքական ազգային շարժման հաղթանակի համար» (Кемаль 305):

Ստեղծված իրադրության պայմաններում մուսավաթականների հայատյաց քաղաքականությունն ավելի բացահայտ շարունակվեց հեղափոխականի սքեմ հագած Ադրբ. ԽՍՀ-ի ղեկավարության կողմից: Այլ կերպ ասած, մուսավաթական Ադրբեջանի հայատյաց ծրագրերը փոխանցվեցին Խորհրդային Ադրբեջանին, որին օժանդակում էր քեմալական Թուրքիան: Այսպիսով՝ ժառանգելով հայ ժողովրդի ցեղասպանության համիդյան, ապա երիտթուրքական, մուսավաթական ու քեմալական ոճրագործ գործելակերպը՝ Ադրբ. ԽՍՀ-ի ղեկավարության կողմից աստիճանաբար սաստկացող ազգային խտրական քաղաքականության պայմաններում հայ բնակչության նկատմամբ բռնություններն ու հալածանքներն ավելի սանձարձակ բնույթ ստացան (Խոջաբեկյան 21-41): Նրանց նպատակն էր էթնիկ զտումների ու ցեղասպանական գործողությունների միջոցով ոչնչացնել հայերին և նրանց ներկայության քաղաքակրթական բոլոր հետքերը իրենց բնակության տարածքում: Ուստի պետք է փաստել, որ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին օրից հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում թե՛ մուսավաթականների և թե՛ նրանց հաջորդած բոլշևիկ պարագլուխների ջանքերն ակնհայտորեն շաղկապված էին, գործելակերպը՝ հարմարեցված ժամանակի թելադրանքին:

Բաքվում հայերի նկատմամբ վերստին սաստկացած հալածանքների պայմաններում պետականացվեցին կամ կողոպտվեցին հայապատկան ձեռնարկություններն ու հասարակական շինությունները (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 58*): Ադրբեջանի Ռազմհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի կարգադրությամբ բռնագրավվեցին Բաքվի հայոց թեմի առաջնորդարանն ու կոնսիստորիայի ամբողջ գույքը և հանձնվեցին 11-րդ Կարմիր բանակի քաղաքական բաժնին (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 57, ց. 3, գ. 2053, թ. 12*): Կողոպուտի ենթարկվեց «Մարդասիրական ընկերության» գրադարանը, որի հարուստ գրաֆոնդը ցիրուցան արվեց Ադրբեջանի զանազան քաղաքներում և գյուղերում (Բագւի վերջին անցուդարձից):

Բռնագրավվեցին նաև հայերին պատկանող ազգային բոլոր հիմնարկությունները՝ «Հայոց կուլտուրական միության» նոր շենքը, որը մինչ այդ մուսավաթական կառավարությունը հանձնել էր երկաթուղային վարչությանը, «Մարդասիրական ընկերության» հին շինությունը, որտեղ ազգային երկսեռ դպրոցներն էին (Աբեղեան 124): Խորհրդային իշխանության հաստատումից երկու օր անց՝ ապրիլի 30-ին, կողպվում և ապա ամբողջովին կողոպուտի է վերածվում Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացչության շենքը (Բագւի վերջին անցուդարձից):

Բռնագրավումների առաջին շարքում ներառվեցին հատկապես Բաքվի նավթարդյունաբերության հիմքը կազմող հայապատկան ընկերությունները (Ստեփանյան 464): Ադրբեջանի Հեղկոմի 1920 թ. մայիսի 24-ի՝ նավթարդյունաբերության ազգայնացման մասին դեկրետով բռնազավթվեցին ավելի քան 272 նավթարդյունաբերական մասնավոր ձեռնարկություններ, որոնց բազայի վրա

կազմավորվեց «Ադրբեջանական նավթային արդյունաբերության (“Азнефт”) պետական միավորումը» (История Азербайджана 241-242; Սարուխան էջ 218; Սահակ Տեր-Գաբրիելյան 185-186): Անդրադառնալով Բաքվի հայերի անհամար սեփականության բռնազավթմանը՝ հասարակական-քաղաքական գործիչ պրոֆ. Արտաշես Աբեղյանն իրավամբ գրել է. «Ատրբէջան սեփականազրկելով իրենց սահմանների հայ բուրժուազիան, տէր են կանգնել հայկական հարստութիւնների եւ ուռճացել ի հաշիւ Հայաստանի հայութեան, բռնել նախկին բուրժուազիայի տեղը»: Նույն թվականի հունիսի 6-ի դեկրետով ազգայնացվեցին նաև Կասպյան առևտրական նավատորմը, հայ առևտրաարդյունաբերողներին պատկանող նավերն ու նավային ընկերությունը (Ստեփանյան. Համառոտ ակնարկ Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից 39-44): Պետականացվեց Արտեմ Փիլիպոսյանին պատկանող «Նորդ» անվանմամբ հյուրանոցային համալիրը (Ստեփանյան 465) և այլն:

Բռնագրավումներից բացի Ադրբեջանի նոր իշխանությունները Բաքվում սկսեցին ձերբակալել հայ հասարակական գործիչներին, հատկապես ՀՅԴ անդամներին: Ձերբակալվածների թվում էին հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Հ. Տեր-Միքայելյանը, Ադրբեջանի խորհրդարանի անդամներ Աբգար Պապյանը, Պողոս Չուբարյանը, Խորեն Համասփյուռը, Արշակ Մալխասյանը, Մովսես Գրիգորյանը, Գրիգոր Պետրոսյանը, «Արտավազդ» նավթային ընկերության նախկին տնօրեն Մարգուլյանը, Հայ ժողովրդական կուսակցության անդամ Երվանդ Թաղիանոսյանը և ուրիշներ, որոնք Բաիլովի բանտում ենթարկվում էին բռնությունների (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 40*; Ձերբակալութիւնները Խորհրդային Ադրբէջանում; Բագուից լուրեր): Անգամ ձերբակալվում և Բաիլովի բանտային հիվանդանոց է տեղափոխվում Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը, որին բաց են թողնում միայն մայիսի 18-ին: Ինչպես ասված է Մ. Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին 1920 թ. հուլիսի 17-ին հղած զեկուցագրում. «Քչերն են արձակվում, մեծամասնությունը տնքում է բանտերում անտանելի պայմանների մեջ» (Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 475): Բանտարկյալներին բանտերից տեղափոխում էին Չեկայի բաժանմունքներ և գնդակահարում: Զորակոչի պատրվակով հավաքագրում էին 18-40 տարեկաններին և ձերբակալում («Կարմիր» Ադրբէջանում): Բանակ էին կանչվում անգամ 16 տարեկանները: Անօրեն կերպով բանակ էին զորակոչվում նաև ՀՀ հպատակները (Ղուլյան 199): Բռնություններ էին գործադրվում հայ բանվորների ու զինվորների նկատմամբ, որոնք գերի էին ընկել ռազմական գործողությունների ժամանակ (Ղուլյան 197):

Բաքվից բացի դրությունը տագնապալից էր նաև գավառներում: Կովկասյան թաթարների վայրագությունները տարածվեցին Նուխիի, Արեշի, Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառների հայկական ու հայաբնակ գյուղերում: Հայահալած քաղաքականությունն ուղեկցվում էր հայապատկան տների հրկիզումներով, կողոպուտներով, կանանց առևանգումներով և այլն: Այդ առիթով Ադրբեջանում դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ՀՀ արտգործնախարարությանն ուղղված զեկուցագրում հաղորդում էր, որ Նուխիի, Արեշի, Գյոքչայի և Շամախիի հայ գյուղացիությունը «ենթակա էր տիրող իշխանութեան ու շրջապատող թրքութեան կողմից հարատեւ բռնութիւնների ու շահատակութիւնների» (Հայաստանի Ազգային - Արխիվ, *ֆ. 200, ց. 1,* գ. 417, թ. 208):

1920 թվականի մայիսի սկզբներից սկսած՝ «Մշակ»-ի էջերը ողողվում են գավառներում տեղի ունեցող ահազդեցիկ իրադարձությունների մասին հաղորդագրություններով: Թերթը «Հայերի կոտորածը Գիօկչայի գաւառում» վերտառությամբ հոդվածում հաստատում է Թիֆլիսում լույս տեսնող “Слово” լրագրի հետևյալ տեղեկությունը. «թուրք ասկեարները Իվանովկա ռուսական գիւղից թնդանօթներով գետնին են հաւասարեցրել Գեօկչայի հայկական գիւղերը և ոչ մի հայի չեն թողել կենդանի, թէև լուրերի

համաձայն մի քանիսին յաջողուել է փախչել անտառներն ու սարերը…» (Հայերի կոտորածը Գիօկչայի գաւառում):

Դրությունն այն աստիճան անվերահսկելի էր դարձել, որ Ադրբ. ԽՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ, կուտկաշենցի Յասին մոլլա Մամեդ Օղլին Ադրբ. ԽՍՀ ՆԳ Ժողկոմին 1920 թ. մայիսի 20-ին ստիպված էր զեկուցել, որ «Նուխու և Արեշի գավառներում հայ բնակչության նկատմամբ ջարդերը շարունակվում են: Նիժ, Վարդաշեն և Ճալեթ գյուղերում, իշխանության ներկայացուցիչները նույն արյունարբու չինովնիկներն են, ովքեր հայ կանանց ու երեխաներին կենդանի վառել են, ստրկության մեջ են պահում գերեվարվածներին և այժմ էլ իրենց տիրապետությունը շարունակում են խորհրդային իշխանության անունից»: Զեկույցն ավարտվում է թուրքի գազանաբարո վարքագծին բնորոշ զզվելի ոճիրի նկարագրմամբ. «Գյուղերի ավագները, որոնք շինություններում ողջ-ողջ այրեցին մոտ 700 կանանց և երեխաների, այժմ շարունակում են իրենց ծառայությունը՝ հանուն խորհրդային իշխանության» (Հայաստանի Ազգային - Արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 250, թ. 12; Барсегов док. № 681, 58):

Միայն Նուխու և Արեշ գավառների օրինակով կարելի է պատկերացում կազմել նաև հայաբնակ մյուս գավառներում տիրող ծանր կացության մասին: Ադրբեջանում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների, կամայականությունների և զանգվածային ջարդերի անմիջական պատասխանատուներին դատապարտելու հարցն այդ օրերին քանիցս բարձրացվել է Հայաստանի Հանրապետության կողմից, և այդ առթիվ վճռական բողոք է ուղարկվել Մոսկվա: Այդ է վկայում Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Համո Օհանջանյանի՝ Ադրբ. ԽՍՀ-ի Ժողկոմի նախագահի տեղակալ Միրզա Դավուդ Հուսեյինովին (պատճենը՝ Մոսկվա Գ. Չիչերինին և Վ. Լենինին) 1920 թ. մայիսի 15-ի ուղարկած հուշագիրը, որում ասվում էր. «Այդ հեղաշրջումը (նկատի ունի խորհրդային կարգերի հաստատումը - Գ. Ս.) իբր թե փոխել է խանական ու մուսավաթական կառավարությունը հեղափոխական սոցիալիստական կառավարությամբ, բայց էապես ոչ մի փոփոխություն չէ մտցրել Ադրբեջանի պետական քաղաքական կյանքի մեջ: ...Դուք բոլորովին չեք հիշում նույնպես բոլորին հայտնի մասսայական այն գազանությունների մասին, որ տեղի ունեցան Նուխիի, Արեշի, Գանձակի, Շամախու, Ղարաբաղի, Գողթանի խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ: Հայ աղջիկներն ու կանայք դեռ այսօր, Ձեր կառավարության օրոք, շարունակում են տանջվել Ադրբեջանի մուսուլմանների հարեմներում, գերության մեջ: Հայ բազմաթիվ աշխատավոր գյուղացիությունը այսօր գտնվում է ստրկի դրության մեջ, գործածվելով որպես գրաստ Ձեր հանրապետության տերիտորիայի վրա զանազան վայրերում» (Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. 210-211): Սակայն այս և համանման բոլոր բողոքները մնացին անհետևանք:

Հակահայկական քաղաքականության շարունակությունը Ադրբ. ԽՍՀ-ի ապիկար իշխանությունների խրախուսանքի պայմաններում պատրանք չէր ներշնչում՝ ակնկալելու իրականության որևէ փոփոխություն: Այս առիթով «Հայաստանը եւ իր հարեւանները» հոդվածում Ս. Վրացյանը փաստարկված խոսքով մերկացնում էր կովկասյան թաթար բոլշևիկների քաղաքական երեսպաշտությունը: Վրացյանի դիպուկ բնորոշմամբ. «Հինգ տարի է ահա բոլշեւիկներն իշխում են Ադրբէջանում. Ադրբէջանցի գործիչների մտայնութեան մէջ հիմնական փոփոխութիւն տեղի ունեցե՞լ է: Ո՛չ, դժբախտաբար. փոփոխութեան նշաներ չեն նշմարւում: Եւ այստեղ էլ պէտք է նկատել, որ այս տեսակէտից մեծ տարբերութիւն չկայ հակաբոլշեւիկ և բոլշեւիկ ադրբէջանցիների միջեւ. Նարիմանովի և Հուսէյնովի ազգային քաղաքականութիւնը միայն ձեւով է տարբերւում Եուսուֆբէգովի և Խան Խոյսկու հետապնդած նպատակներից. էութիւնը նոյնն է» (Վրացեան 70):

Ադրբեջանում հայահալած քաղաքականությանը նպաստեց Բաքվում 1920 թ. սեպտեմբերի 1-8-ը Կոմինտերնի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Համագումարի օրերին Բաքվում էին հայերի՝ 1918 թ. սեպտեմբերյան կոտորածների կազմակերպիչներ Խալիլ և Էնվեր փաշաները

(Լազեան 240)։ Սեպտեմբերի 4-ին համագումարի 4-րդ նիստում ընթերցվեց Էնվերի հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Մենք կարծում ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին» (Первый сьезд народов Востока 109)։ Սա, ինքնին, նշանակում էր Արևելյան Այսրկովկասի տեղաբնիկ ժողովուրդների ֆիզիկական ոչնչացում, էթնիկական զտում և ուծացում (Харатян)։

Ղեկավարվելով վերոնշյալ նենգամիտ սկզբունքով՝ Ադրբեջանի իշխանությունները շարունակեցին հայահալած քաղաքականությունը։ Ձանգվածային բնույթ կրեցին հայերի տների խուզարկությունները թանկարժեք իրեր հայտնաբերելու և բռնագրավելու նպատակով։ «Արծաթի և թանկարժէք իրերի գոյութեան մասին հայ տարրը Ադրբէջանում վաղուց մոռացել է»,- գրում է «Յառաջ»-ը (Բագւի վերջին անցուդարձից)։ Սանձարձակ կողոպուտով հայ բնակչությունից խլվում էին վերջին կահ-կարասին, հագուստը, սնունդը և ապրուստի այլ միջոցները։ «Նոր Աշխատաւոր» թերթի վկայությամբ՝ «Հայերի տներում անվերջ խուզարկութիւններ են կատարւում։ 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին տաճկա-ադրբէջանեան զօրքի ու ամբոխի կողմից կատարած թալանի մնացածը այժմ լրացնում է «սոցիալիստական սովետական, կարմիր Ադրբէջանը»։ Այս սանձարձակ թալանին հայը չգիտէ որին երանի տայ՝ Մուսաւաթին, Իթթիհատին, կոմունիստին, թէ տաճիկ ասկեարին» («Կարմիր» Ադրբէջանում)։

Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանը Էջմիածնի Սինոդին՝ 1920 թ. սեպտեմբերի 2-ին հղած զեկույցում նշում էր, որ կոտորածներից հետո Շամախու գավառում մնացել է մոտ 3000, իսկ Գյոքչայի գավառում՝ 2500 հայ (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 57, գ. 2, գ. 2053, թ. 1*)։

Այսպիսով՝ ժառանգելով հայ ժողովրդի ցեղասպանության համիդյան, ապա երիտթուրքական, մուսավաթական ու քեմալական ոճրագործ գործելակերպը՝ Ադրբեջանի խորհրդային իշխանությունը ծավալապաշտական քաղաքականությունից բացի ազգային խտրական քաղաքականության գործադրմամբ Արևելյան Այսրկովկասի տեղաբնիկ ժողովուրդների, մասնավորապես՝ հայ բնակչության նկատմամբ նպատակաուղղված շարունակեց էթնիկ զտումների ու հալածանքի քաղաքականությունը։ Այլ կերպ ասած, մուսավաթական Ադրբեջանի հայատյաց ծրագրերը փոխանցվեցին Խորհրդային Ադրբեջանին, որը քեմալականների ուղղորդմամբ «Մեծ Ադրբեջան» ծրագիրը նպատակադրեց իրականացել իրենց ագրեսիվ զինանոցի՝ բազմիցս փորձված զենքով (Գաթրճեան 8)։ Ուստի Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին օրից հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում թե՛ մուսավաթականների և թե՛ նրանց հաջորդած բոլշևիկ պարագլուխների ջանքերն ակնհայտորեն շաղկապված էին։ Ադրբեջանի բոլշևիկ ղեկավարները կեղծ համերաշխության ձևակերպումներով քողարկված կարգախոսներով ամենուրեք հալածանք ու բռնություններ էին կիրառում տեղաբնիկ հայ և մյուս ժողովուրդների նկատմամբ։ «Բոլշեւիկները շարժւում են» խմբագրականի ներքո ՀՅԴ Երևանի «Յառաջ» լրագիրը, քննադատելով Ադրբեջանը ղեկավարող բոլշևիկների՝ Հայաստանի դեմ սպառնալի ու շովինիստական ձգտումները, գրում էր. «Ի զուր չէ, որ այսօր Խորհրդային Ադրբէջանը բացայայտօրէն այն դերն ու դիրքն է ստանձնում մեր երկրի նկատմամբ, ինչ ունեցել է մինչ մարտեան (նկատի է առնվում Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումը – Գ. Ս.) յեղաշրջումը մուսաւաթական Ադրբէջանը։ Իթթիհատի չար ոգին՝ արիւնաներկ Կարաբէկօվը նստած է Բագւում կողք-կողքի Համիդ Հիւսէինօվների հետ…» (Բոլշեւիկները շարժւում են)։

Այս իրադարձությունները նկատի ուներ Ալեքսանդր Մյասնիկյանը, որը ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնը զբաղեցնելու շրջանում՝ 1923 թ. մարտի 19-23-ը, Թիֆլիսում տեղի ունեցած՝ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 2-րդ համագումարում «Կոմունիստական կուսակցությունը և ազգային հարցը Անդրկովկասում» խորագրով զեկուցման մեջ անդրադառնում է Ադրբեջանում և Վրաստանում հայերի իրավական դրությանն առնչվող հարցերին և մատնանշում. «Թվում էր, թե խորհրդային իշխանութեան գոյութեամբ՝ կայացավ այդ հաշտութիւնն իր ողջ ծավալով։ Սակայն այդպես չէ։ Հասկանալի է,

խորհրդային իշխանությունը հանդիսանում է իրական առհավատչեա՝ միջազգային հաշտութիւն հաստատելու համար, սակայն բանից դուրս է գալիս, որ հին ցարական ազգայնական կարգերի մնացորդները դեռ բավական զորեղ են… Վրացական շովինիզմը (Վրաստանում) ուղղված ընդդեմ հայերի, օսերի, աջարացիների և աբխազների, Ադրբեջանի շովինիզմը (Ադրբեջանում) ուղղված ընդդեմ հայերի…» (**Մարտունի**):

Շարունակելի

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղեան, Արտաշէս. *Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ)*, «Հայրենիք», Պօսթըն, 1928, Զ տարի, յուլիս, № 9, էջ 119-131:
2. Աբեղեան, Արտաշէս. *Հայ-Ատրբէջանեան յարաբերութիւնները (ազգային քաղաքական խնդիրներ)*, «Հայրենիք», Պօսթըն, 1929, Է տարի, սեպտեմբեր, № 8, էջ 110-118:
3. *Բագուի դիմակահանդէսը*, «Մշակ», Թիֆլիս, 1920, մայիսի 9, № 13:
4. *Բագուից լուրեր*, «Մշակ», Թիֆլիս, 1920, նոյեմբերի 28, № 146:
5. *Բագւի վերջին անցուդարձից*, «Յառաջ», Երեւան, 1920, յուլիսի 9, № 143:
6. *Բոլշեւիկները շարժւում են*, «Յառաջ», Երեւան, 1920, յուլիսի 9, № 143:
7. *Բոլշեւիկները Բագւում* (I), «Մշակ», Թիֆլիս, 1920, յունիսի 24, № 46:
8. Գաթրճեան, Աւօ. *Պայքար ընդդեմ Ատրպէյճանի հակահայ ոճրագործ քաղաքականութեան եւ անոնց ապատեղեկատուութեան* (Հայ Դատ), Հալէպ, 2009:
9. *Մահմեդական համագումարը Միւնխենում*, «Ժողովուրդ» Թիֆլիս, 1920, յունիսի 10, № 92:
10. Լազեան, Գաբրիել. *Հայաստան եւ Հայ Դատը հայ և ռուս յարաբերութիւններուն լոյսին տակ*, «Ադանա», Երեւան, 1991:
11. Խոջաբեկյան, Վլադիմիր. *Ցեղասպանությունը և հայաթափությունը Ադրբեջանում (1918-1990-ական թթ.)*, ՊԲՀ, Երևան, 2005, № 1, էջ 21-41:
12. Խուրշուդյան, Ռուբեն. *Եղեռնը և բոլշևիզմը, «Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր»*: Մաս 3, Երևան, 1995, էջ 32-35:
13. *«Կարմիր» Ադրբէջանում*, «Նոր Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, օգոստոսի 20, № 117:
14. Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 200, g. 1, գ. 597, թ. 55:
15. ---. ֆ. 200, g. 1, գ. 417, թ. 208:
16. ---. ֆ. 200, g. 1, գ. 581, թ. 58:
17. ---. ֆ. 57, g. 3, գ. 2053, թ. 12:
18. ---. ֆ. 278, g. 1, գ. 32, թ. 40:
19. ---. ֆ. 200, g. 1, գ. 250, թ. 12:
20. *Հայերի կոտորածը Գիօկչայի գաւառում*, «Մշակ», Թիֆլիս, 1920, մայիսի 3, № 12:
21. *Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)*, գիրք I: Կազմողներ՝ **Ս. Միրզոյան**, **Ա. Ղազիյան**, պատ. խմբագիր՝ **Ա. Վիրաբյան**, Երևան, ՀՀ Պատմության արխիվ, 2003:
22. *Ձերբակալութիւնները Խորհրդային Ադրբէջանում*, «Յառաջ», Երեւան, 1920, յուլիսի 1, № 137:
23. Ղազանջյան, Ռեմ. *Բոլշևիկները և երիտթուրքերը: Նոր փաստաթղթեր ռուս-թուրքական հարաբերությունների մասին (1920-1922 թթ.)*, Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 1998:
24. Ղույյան, Յուրա. *Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.)*, Երևան, «Եգեա», 2009:
25. Մակինցյան, Պողոս. *Նոր Թուրքիան*, «Նորք». գիտական, գրական և քաղաքական հանդես, գիրք չորրորդ, Երևան, 1924, էջ 195-203:

26. Մարտունի, Ալեքսանդր. *Կոմունիստական կուսակցությունը և ազգային հարցը Անդրկովկասում* (III), «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, ապրիլի 11, № 37:

27. Մոսկովցի. *Մոսկւա-Երեւան (Ճամբորդական տպաւորութիւններ)*, «Դրօշակ», Փարիզ, 1927, սեպտեմբեր, № 9, էջ 279-282:

28. *«Մուսաւաթ»-ը փոշմանել է*, «Յառաջ», Երեւան, 1920, յունիսի 23, № 130:

29. *Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. (փաստաթղթեր և նյութեր)*, ԲՀԱ, Երևան, 1993, № 1-2:

30. Սահակ Տեր-Գաբրիելյան. *Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր*, «Հայաստան», Երևան, 1979:

31. Սահակյան, Տիգրան. *Ցավալի պայմանագրեր*, Երևան, «Լուսակն», 2007:

32. Սաֆրաստյան Ռուբեն**.** *Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.)*, «Տիր» հրատ., Երևան, 2019:

33. Սարուխան, Ալեքսանդր. *Աղեքսանդր Մանթաշեանց. Մեծ վաճառականն եւ բարեգործը: Յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1931:

34. Ստեփանյան, Գևորգ. *Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)*, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010:

35. Ստեփանյան, Գևորգ. *Համառոտ ակնարկ Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից: Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում: «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր*, Երևան, 2010, էջ 39-44:

36. Վրացեան, Սիմոն. *Հայաստանը եւ իր հարեւանները*, «Դրօշակ», Փարիզ, 1925, սեպտեմբեր, № 3, էջ 68-71:

37. Տէր-Յակոբեան, Յակոբ. *Հայաստանի վերջին աղետը (անտիպ փաստաթուղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ)*, տպ. Մ. Տէր Սահակեան, Կ. Պոլիս, 1921:

38. *Геноцид армян. Отвественность Турции и обязательства мирового сообщества (документы и комментарий)*: сост. отв. ред. Барсегов Ю., т. 2, ч. 1, «Гардараки», Москва, 2003.

39. *История Азербайджана. т III, ч. I*, изд-во АН АзССР, Баку, 1963.

40. *Кемаль, Мустафа. Путь новой Турции, т. III*, Гос. Соц.-эк. изд-во, Москва, 1934.

41. *Первый сьезд народов Востока. Баку 1-8 сентября 1920 г. Стенографические отчеты*, изд-во коом. Интер.-ла, Петроград, 1920.

42. *Политбюро и дело Берия (сборник документов)*, сост. Мозохин О., Попов А., под общей ред. О. Б. Мозохина, «Кучково поле», Москва, 2012.

43. Харатян, Грануш. *Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев*, “Центриздат”, Москва, 2015.

WORKS CITED

1. Abeghean, Artashe's. *Menq ew mer harewannery' (azgayin qaghaqakanut'ean xndirner)* [*We and our Neighbors. (Problems of National politics)*], «Hayreniq», Po'st'y'n, 1928, Z tari, yulis, № 9, e'j 119-131. (in Armenian)

2. Abeghean, Artashe's. *Hay-Atrbe'janean yaraberut'iwnnery' (azgayin qaghaqakan xndirner)* [*Armenian-Adrbejan Relations (National Political Problems)*], «Hayreniq», Po'st'y'n, 1929, E' tari, september, № 8, e'j 110-118. (in Armenian)

3. *Bagui dimakahande'sy'* [*Masquerade of Baku*], «Mshak», T'iflis, 1920, mayisi 9, № 13. (in Armenian)

4. *Baguic lurer* [*News from Baku*], «Mshak», T'iflis, 1920, noyemberi 28, № 146. (in Armenian)

5. *Bagwi verjin ancudard'ic* [*From the Latest Events of Baku*], «Yar'aj», Erevan, 1920, yulisi 9, № 143. (in Armenian)

6. *Bo'lshewiknery' sharjhwum en* [*The Bolsheviks are Moving*], «Yar'aj», Erevan, 1920, yulisi 9, № 143. (in Armenian)

7. *Bolshewiknery' Bagwum (I)* [*The Bolsheviks in Baku*], «Mshak», T'iflis, 1920, yunisi 24, № 46. (in Armenian)

8. Gat'rtwean, Awo'. *Payqar y'nddem Atrpe'ytwani hakahay otwragorc' qaghaqakanut'ean ew anonc apateghekatuut'ean* (Hay Dat) [*The Fight against the Anti-Armenian Criminal Policy of Azerbaijan and its Disinformation* (Hay Dat)], Hale'p, 2009. (in Armenian)

9. *Mahmedakan hamagumary' Miwnxenum* [*Muslim Congress in Munich*], «Jhoghovurd» T'iflis, 1920, yunisi 10, № 92. (in Armenian)

10. Lazean, Gabriel. *Hayastan ew Hay Daty' hayevr'us yaraberut'iwnnerun loysin tak* [*Armenia and Hay Dat in the Light of Armenian-Russian Relations*], «Adana», Erevan, 1991. (in Armenian)

11. Khojabekyan, Vladimir. *Ceghaspanut'yuny' ev hayat'ap'ut'yuny' Adrbejanum (1918-1990-akan t't',)* [*Genocide and Eviction of Armenians in Azerbaijan (1918-1990)*], PBH, Erevan, 2005, № 1, e'j 21-41. (in Armenian)

12. Khurshudyan, R'uben. *Egher'ny' ev bolshevizmy', «Hayoc ceghaspanut'yun. pattwar'ner ev daser». Mas 3* [*Genocide and Bolshevism, "The Armenian Genocide. Reasons and Lessons, Part 3*], Erevan, 1995, e'j 32-35. (in Armenian)

13. *«Karmir» Adrbe'janum* [*In the Red Azerbaijan*], «Nor Ashxatawor», T'iflis, 1920, o'gostosi 20, № 117. (in Armenian)

14. Hayastani Azgayin Arxiv [National Archive of Armenia], f. 200, c. 1, g. 597, t'. 55. (in Armenian)

15. ---. f. 200, c. 1, g. 417, t'. 208. (in Armenian)

16. ---. f. 200, c. 1, g. 581, t'. 58. (in Armenian)

17. ---. f. 57, c. 3, g. 2053, t'. 12. (in Armenian)

18. ---. f. 278, c. 1, g. 32, t'. 40. (in Armenian)

19. ---. f. 200, c. 1, g. 250, t'. 12. (in Armenian)

20. *Hayeri kotorac'y' Gio'kchayi gawar'um* [*The Massacre of Armenians in the Province of Giokcha*], «Mshak», T'iflis, 1920, mayisi 3, № 12. (in Armenian)

21. *Hayeri kotorac'nery' Baqvi ev Elizavetpoli nahang-nerum 1918-1920 t't'. (p'astat'ght'eri ev nyut'eri jhoghova-c'u), girq I* [*The Massacre of Armenians in Baku and Elizavetpol Provinces in 1918-1920. (Collection of Documents and Materials), book I*]: Kazmoghner` S. Mirzoyan, A. Ghaziyan, pat. xmbagir` A. Virabyan, Erevan, HH Patmut'yan arxiv, 2003. (in Armenian)

22. *D'erbakalut'iwnnery' Xorhrdayin Adrbe'janum* [*Arrests in Soviet Azerbaijan*], «Yar'aj», Erevan, 1920, yulisi 1, № 137. (in Armenian)

23. Ghazanjyan, R'em. *Bolsheviknery' ev eritt'urqery'. Nor p'astat'ght'er r'us-t'urqakan haraberut'yunneri masin (1920-1922 t't'.)* [*Bolsheviks and Young Turks. New Documents on Russian-Turkish Relations (1920-1922)*], Erevan, HH GAA Arevelagitut'yan institut, 1998. (in Armenian)

24. Ghulyan, Yura. *Hayastan-Adrbejan haraberut'yunneri patmut'yunic (1918-1920 t't'.)* [*From the History of Armenia-Azerbaijan Relations (1918-1920)*], Erevan, «Egea», 2009.

25. Makincyan, Poghos. *Nor T'urqian* [*New Turkey*], «Norq». gitakan, grakan ev qaghaqakan handes, girq chorrord, Erevan, 1924, e'j 195-203. (in Armenian)

26. Martuni, Aleqsandr. *Komunistakan kusakcut'yu-ny' ev azgayin harcy' Andrkovkasum (III)* [*The Communist Party and the National Question in Transcaucasia (III)*], «Martakoch», T'iflis, 1923, aprili 11, № 37. (in Armenian)

27. Moskovci. *Moskwa-Erevan (Twambordakan tpaworut'iwnner)* [*Moscow-Yerevan (Travel Impressions)*], «Dro'shak», P'ariz, 1927, september, № 9, e'j 279-282. (in Armenian)

28. *«Musawat'»-y' p'oshmanel e'* [*"Musavat" Regrets*], «Yar'aj», Erevan, 1920, yunisi 23, № 130. (in Armenian)

29. *Naxijevan-Sharury' 1918-1921 t't'. (p'astat'ght'er ev nyut'er)* [*Nakhichevan-Sharur in 1918-1921. (Documents and Materials)*], BHA, Erevan, 1993, № 1-2. (in Armenian)

30. Sahak Ter-Gabrielyan. *Hodvac'ner, twar'er, p'astat'ght'er* [*Articles, Speeches, Documents*], «Hayastan», Erevan, 1979. (in Armenian)

31. Sahakyan, Tigran. *Cavali paymanagrer* [*Painful Contracts*], Erevan, «Lusakn», 2007. (in Armenian)

32. Safrastyan R'uben. *Must'afa Qemal. payqar Hayastani Hanrapetut'yan dem (1919-1921 t't'.)* [*Mustafa Kemal. the Struggle against the Republic of Armenia (1919-1921)*], «Tir» hrat., Erevan, 2019. (in Armenian)

33. Saruxan, Aleqsandr. *Agheqsandr Mant'asheanc. Mec' vatwar'akann ew baregorc'y'. Yishoghut'iwnner ir mahuan 20 ameaki ar't'iw* [*A great Merchant and Philanthropist. Memories of the 20th Anniversary of his Death*], Mxit'arean tparan, Vienna, 1931. (in Armenian)

34. Step'anyan, Gevorg. *Baqvi nahangi hayut'yuny' XIX dari erkrord kesin (patmajhoghovrdagrakan usum-nasirut'yun)* [*Armenians of Baku Province in the second half of the XIX century (Historical and Demographic Research)*], Erevan, HH GAA patmut'yan institut, 2010. (in Armenian)

35. Step'anyan, Gevorg. *Hamar'ot aknark Kaspic c'ovi haykakan navatormi patmut'yunic. C'ovi mshakuyt'y`` mardkut'yan mshakuyt'n e' qaghaqakrt'ut'yunneri erkxosut'yunum. «Ayas» c'ovayin hetazotut'yunneri akumbi 25-amyakin nvirvac' gitajhoghovi nyut'er* [*A Brief Overview of the History of the Armenian fleet of the Caspian Sea. The Culture of the Sea is the Culture of Humanity in the Dialogue of Civilizations. Proceedings of the conference dedicated to the 25th anniversary of the Ayas Marine Research Club*], Erevan, 2010, e'j 39-44. (in Armenian)

36. Vracean, Simon. *Hayastany' ev ir harewannery'* [*Armenia and its Neighbours*], «Dro'shak», P'ariz, 1925, september, № 3, e'j 68-71. (in Armenian)

37. Te'r-Yakobean, Yakob. *Hayastani verjin aghety' (antip p'astat'ught'er, diwanagitakan grer ew bazmat'iw patkerner)* [*The Latest Catastrophe in Armenia (Unpublished Documents, Diplomatic Letters and a lot of Images)*], tp. M. Te'r Sahakean, K. Polis, 1921. (in Armenian)

38. Genocid armjan. *Otvestvennost' Turcii i objaza-tel'stva mirovogo soobshhestva (dokumenty i kommentarij)* [*The Armenian Genocide. Turkey's Responsibility and Obligations of the World Community (documents and commentary)*]: sost. otv. red. Barsegov Ju., t. 2, ch. 1, «Gardaraki», Moskva, 2003. (in Russian)

39. *Istorija Azerbajdzhana* [*History of Azerbaijan*]. t III, ch. I, izd-vo AN AzSSR, Baku, 1963. (in Russian)

40. *Kemal', Mustafa. Put' novoj Turcii* [*The Path of the New Turkey*], t. Ill, Gos. Soc.-jek. izd-vo, Moskva, 1934. (in Russian)

41. *Pervyj s'ezd narodov Vostoka. Baku 1-8 sentjabrja 1920 g. Stenograficheskie otchety* [*The First Congress of the Peoples of the East. Baku 1-8 September 1920 Verbatim Reports*], izd-vo koom. Inter.-la, Petrograd, 1920. (in Russian)

42. *Politbjuro i delo Berija (sbornik dokumentov)* [*Politburo and the Beria Case (Collection of Documents)*], sost. Mozohin O., Popov A., pod obshhej red. O. B. Mozohina, “Kuchkovo pole”, Moskva, 2012. (in Russian)

43. Haratjan, Granush. *Oficial'nye jetno-demograficheskie pokazateli v Azerbajdzhane v kontekste poiska i krizisa identichnosti azerbajdzhancev* [*Official Ethno-Demographic Indicators in Azerbaijan in the Context of the Search and Identity Crisis of Azerbaijanis*], “Centrizdat”, Moskva, 2015. (in Russian)

THE STAGES OF IMPLEMENTATION OF THE POLICY OF ETHNIC CLEANSING AND GENOCIDE OF ARMENIANS IN THE EASTERN CISCAUCASUS (11TH-20TH CC.) (THE FOUR PART)

GEVORG STEPANYAN
National Academy of Science of Republic of Armenia,
Institute of History, Department of History of Armenian
Colonies and Diaspora, Head,
Doctor of Sciences in History, Professor,
Yerevan, the Republic of Armenia

The aim of the article is to present the motives and implementation stages of ethnic cleansing and genocidal policy perpetrated towards the indigenous Armenian population during the 11th-20th centuries in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, on the basis of various primary sources (archival documents, statistical materials, periodical press, theme related literature). The work is written by a combined examination of facts, applying the principles of historical investigation and historical-comparative analysis. The level of reliability and validity of the sources through their comprehensive study has been verified.

Through the combination of facts the following phases of the history of the main issue are presented: the policy of ethnic cleansing and genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus were still implemented in the 11th-18th centuries when the region regularly appeared under the invasions and dominion of various conquering nomadic tribes (Turk-Seljuks, Mongol-Tatars, Tamerlane, nomadic Turkmen tribes of Kara-Koyunlu and Ak-Koyunlu, Kizilbash invasions followed by the Turkish-Persian wars, Sunni Lezgins, invasions of Nader Shah and Agha Mohammad Khan). As a result, some part of the Armenian population was deported and left native lands or forcedly accepted the Muslim religion of the conquerers. The next phase of ethnic cleansing and atrocities was the period of the Armenian-Tatar clashes (1905-1906). Later, the policy of ethnic cleansing and genocide was implemented at state level already during the Musavat regime of the artificial “Azerbaijan” formation (1918-1920), and finally during the Soviet regime (1920-1990). The article substantiates the fact that the indigenous Armenian population of the region was subjected to ethnic cleansing and genocide in its cradle, just as the Young Turks carried out the extermination of the Western Armenians in 1915-1916 in Western Armenia. Therefore, that policy should be qualified as the continuation and a constituent part of the Armenian Genocide, because the Armenian Genocide with its geographical coverage (from Western Armenia and other Armenian-inhabited territories of the Ottoman Empire to Baku) was a consequence of the implementation of the complete program of Pan-Turkism. There are numerous references to the issue in the historical literature, though the comprehensive study of ethnic cleansing and genocidal policies of Armenians in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, has not been the subject of a separate study.

Key words: *Eastern Cis-Caucasus, Baku province, left bank of Kur, Pan-Turkism, ethnic cleansing, xenophobia, genocide, deportation.*

ЭТАПЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ЭТНИЧЕСКИХ ЧИСТОК АРМЯН И ГЕНОЦИДАЛЬНОЙ ПОЛИТИКИ В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ (XI-XX ВВ.) (ЧАСТЬ ЧЕТВЁРТАЯ)

ГЕВОРГ СТЕПАНЯН
заведующий отделом истории армянских колоний и Диаспоры
Института истории Национальной академии наук Республики Армении,
доктор исторических наук, профессор
г. Ереван, Республика Армения

Цель статьи – на основе разнообразных источников (архивные документы, статистические материалы, периодическая печать, тематическая литература) представить причины и этапы осуществления этнических чисток и геноцидальной политики по отношению к коренному армянскому населению Восточного Закавказья в течение XI-XX вв. на территории, простирающейся от долины р. Куры до Апшеронского полуострова. Работа изложена с применением принципов сравнительно-исторического анализа, сопоставительного изучения фактов. Степень достоверности и подлинности источников уточнена нами путем их всестороннего исследования. На основе сопоставления фактов история проблемы представляется через следующие этапы: политика этнических чистки и погромы по отношению к армянам Восточного Закавказья в XI-XVIII вв., когда регион подвергался захватническим набегам и установлению господства турок-сельджуков, монголо-татар, Тамерлана, кочевых туркменских племен кара-коюнлу и ак-коюнлу, кзлбашей, а также последовавшими за всем этим турецко-персидским войнам, походам суннитов лезгинов, Надир-шаха и Ага Могамед хана. Вследствие всего этого определенная часть армянского населения была насильственно депортирована от родных очагов или вынужденно приняла веру мусульманских захватчиков. Следующий этап этнических чисток и погромов армянского населения происходил в период армяно-татарских столкновений 1905-1906 гг. Затем политика этнических чисток и геноцида осуществлялась уже на государственном уровне мусаватистским режимом искусственного образования, именуемого «Азербайджан», в 1918-1920 гг., и наконец, – в эпоху советского периода в 1920-1990 гг. В статье обосновывается факт того, что коренное армянское население края было подвергнуто этническим чисткам и геноциду на своей родине также, как младотурки осуществили геноцид западных армян в 1915-1916 гг. в Западной Армении. Следовательно, эту политику следует квалифицировать как продолжение и составную часть политики геноцида армян, так как Геноцид армян в своем географическом охвате (от Западной Армении и других армянонаселенных территорий Османской империи до Баку) был следствием реализации единой программы пантюркизма. Хотя в исторической литературе есть неоднократные обращения к рассматриваемой проблеме, однако она не становилась предметом отдельного всеобъемлющего исследования.

Ключевые слова: *Восточное Закавказье, Бакинская губерния, левобережье Куры, пантюркизм, этнические чистки, ксенофобия, геноцид, депортация.*